

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ



ԼԻԼԻԹ ՀԱԿՈՐՅԱՆ

«Էջմիածին» ամսագիր

ՅՈՎՀԱՆ ՕՃՆԵԳԻ ԶԱՅՐԱՊԵՏԻՆ ՆՎԻՐԱԿԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԱՐԱՐԱՏ» ԵՎ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

« Ետք ունինք խոստովանելու, թէ այն առանձնական դիրքը, զոր կը պահէ այսօր Հայաստանեայց Եկեղեցին՝ իր ներքին կազմին, իր աւանդութիւններուն եւ վարդապետական լայն ըմբռնումներուն տեսակետով, Օճնեցիէն ժառանգած է զայն: Այն պատկառանքը, զոր կը պարտինք պահել Մեծ Եկեղեցւոյ հանդէպ առանց անշնորհք ընդհարումներու եւ այն յարգանքը՝ զոր խորունկ նուիրումով մը կրնծայենք մեր Եկեղեցիին, ստուգիւ պտղաբերումն է Օճնեցիի իմաստութեան»¹. այսպէս բնութագրեց Եղիշէ արք. Դուրյանը 1913 թ. Հովհան Օճնեցուն եւ նրա հայրապետական գործունեութիւնը, որը ծավալվել էր մեզանից 1300 տարի առաջ: «Էջմիածին» ամսագրի դեկտեմբերյան այս համարը նվիրված է Ս. Հովհան Օճնեցի Կաթողիկոսի՝ հայրապետութեան 1300 ամյակին (կթղ. 717-728): Սակայն սխալ կլինի համարել, որ «Էջմիածինը» միայն այս համարում է անդրադառնում Հ. Օճնեցուն, քանի որ ուսումնասիրութեան արդյունքում հավաքված նյութերը խոսում են այն մասին, որ Իմաստասեր Հայրապետը ուսումնասիրողների ուշադրութեան կենտրոնում է եղել դեռեւս 1880-ական թթ. «Արարատ» ամսագրի էջերում: Եվ քանի որ «Էջմիածինը» «Արարատի» անմիջական ժառանգորդն է, ուստի չէինք կարող անտեսել այնտեղ հրատարակված Հ. Օճնեցուն վերաբերող հոդվածները:

1884 թ. Հոսիկ վրդ. Մովսիսյանը «Արարատ» ամսագրում ձեռնարկեց «Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու պատմութիւն» հոդված

¹ Եղիշէ արք. Դուրյան, Հովհան Օճնեցի, «Տաճար», Կ. Պոլիս, 1913, էջ 487-488:

ծաշարը, ուր հանգամանորեն ներկայացվեցին Հայ Եկեղեցու բոլոր Ս. Հայրերը՝ սկսած Գրիգոր Լուսավորչից: Ժամանակագրորեն հասնելով Հ. Օձնեցուն՝ Հուսիկ վարդապետը նախ ներկայացնում է քաղաքական այն բարդ իրավիճակը, որը տիրում էր Լ. դարի սկզբներին: Դրան ավելանում են նաև աղանդավորական շարժումները, որոնք լուրջ վտանգ էին ներկայացնում Հայ Եկեղեցուն: Նման բարդ ու հակասական իրավիճակում է կաթողիկոսական աթոռին նստել Հ. Օձնեցի հայրապետը: Հոգվածագիրն ամենայն մանրամասնությամբ նկարագրում է Հովհաննես Իմաստասերի դիվանագիտական քայլերը արաբների հետ եւ պայքարն ընդդեմ աղանդավորների՝ խոսքով, գրով եւ գործով: Հոգվածը եզրափակվում է Օձնեցուն վերագրվող երկերի թվարկումով եւ 719 թ. Դվինի եկեղեցական ժողովի 32 կանոններով («Արարատ», 1884, Դ., էջ 149-155):

1888 թ. ամսագրի Ժ. համարում հրատարակվել է Վարդան Վարդապետի «Ճառ Վարդան վարդապետի ի վերայ Հովհան Օձնեցու ըստ խնդրոյ Համագասպ եպիսկոպոսի Հաղպատայ» բնագիրը, որի աշխարհաբարի փոխադրումը լույս է տեսնում «Էջմիածին» ամսագրի այս համարում Ն. Պողոսյանի թարգմանությամբ (տե՛ս էջ 26-38):

1948 թ. արդեն «Էջմիածին» ամսագրի Ա.-Բ. միացյալ համարում Երվանդ Շահագիրը «Համառոտ տեղեկություն հայոց շարականների մասին» հոգվածում, նախ ներկայացնելով շարականների ընդհանուր բնութագրումը, տարբերակումները, կառուցվածքն ու թեմատիկան, առանձին ենթավերնագրով առանձնացնում է Հ. Օձնեցուն, ում կենսագրության համառոտ տեղեկություններից հետո նշում է այն շարականների վերնագրերը, որոնք վերագրվում են նրան («Էջմիածին», 1948, Ա.-Բ., էջ 67-72):

Գրիգոր Հակոբյանի հեղինակությամբ 1976 թ. Լ.-Թ. համարում լույս է տեսել «Ց-րդ դարի շարականագիրները. Հովհան Օձնեցի» հոգվածը: Հեղինակը բարձր է գնահատում Օձնեցուն վերագրվող շարականները՝ համարելով դրանք «մեր հոգեւոր բանաստեղծական գեղեցիկ եւ հոգեւոր էջերը» (էջ 28): Հոգվածում քննված են Օձնեցուն վերագրվող 4 շարականները՝ ա) Կանոն Դաւթի մարգարէին եւ Յակոբայ առաքելոյն, բ) Կանոն Ստեփանթոսի նախավկային, գ) Կանոն Պետրոսի ր Պողոսի գլխաւոր առաքելոցն եւ դ) Կանոն Որդւոցն Որոտման: Գ. Հակոբյանի համոզմամբ՝ 1963 թ. Երուսաղեմում լույս տեսած Շարակնոցի «Յօրինողք շարականաց» առաջաբանում Հ. Օձնեցուն վերագրվող «Չմեղաք յամենայնի եւ զկարգ մեծ տօնիցն» շարականները նրան չեն պատկանում,

քանի որ «Ցանկ շարականաց տօնից սրբոց» մասում հիսունի հասնող մեծ ու փոքր կանոններ կան, որոնց բովանդակած շարականների թիվը հասնում է հարյուրի՝ տարբեր ոճով ու արվեստով գրված.... Անկարելի է, որ հարյուրի հասնող այդ բազմաբնույթ շարականները միայն մի հեղինակի գործ լինեն» (էջ 26):

1980 թ. Բ.- Գ. միացյալ համարում լույս է տեսել Օձնեցու «Ընդդեմ պավլիկյանների» ճառի՝ արեւելահայերենի փոխադրումը՝ Ա. Ղազինյանի թարգմանությամբ:

Օձնեցուն վերագրվող հոգեւոր երգերի եւ շարականների ուսումնասիրությունն է անդրադարձել Խ. Պալյանը «Հովհան Օձնեցուն վերագրվող շարականներ» հոդվածում (1984, ԺԱ.-ԺԲ., էջ 88-96): Հոդվածագրի նպատակը նշված շարականների հեղինակների հարցն ապացուցելը է: Նա, հենվելով պատմական հայտնի փաստերի եւ եկեղեցական ավանդություն վրա, քննել է շարականների լեզվաոճական, բառապաշարային եւ մեղեդային մի քանի առանձնահատկություններ:

Խաժակ վարդապետ Պարսամյանն իր «Մկրտության օծումները Հովհան Օձնեցի կաթողիկոսի ժամանակ» (1989, է., էջ 45-60) հոդվածում անդրադարձել է Օձնեցու կողմից մկրտության խորհրդի իրականացման կանոններին: Հարուստ աղբյուրագիտական տեղեկություններով Խաժակ վարդապետը նախ ներկայացնում է Մկրտության խորհուրդը Հայ Եկեղեցում, ապա առանձնացնում Հ. Օձնեցու «Մկրտութեան խորհուրդի կապակցութեամբ՝ գրած Կանոնները եւ Ատենաբանութիւնը»: Հեղինակի եզրակացությամբ Օձնեցին բարեկարգել է Հայ Եկեղեցում գործածվող սխալ սովորությունները, եւ հերքում է գիտության մեջ առաջ եկած այն տեսակետը, որի համաձայն Օձնեցին է առաջին անգամ հաստատել կամ վերահաստատել երախաների օծումը:

Մհեր Պապայանի հեղինակությամբ (1995, Բ.- Գ., էջ 18-26) «Հովհան Օձնեցի կաթողիկոսի պայքարը քաղկեդոնականության դեմ եւ Հայ Եկեղեցու ազգայնացման փուլի ավարտը» հոդվածը նկարագրում է Օձնեցու քաղաքական դիրքորոշումը եւ այդ ժամանակաշրջանում Հայ Եկեղեցու դիրքերն ամրապնդելու նրա ջանքերը: Իբրեւ Իմաստասեր կաթողիկոս՝ նա իր կաթողիկոսության 2-րդ տարում՝ 719 թ., հրավիրված Դվինի ժողովում ընդունում է մի քանի կանոններ Հայ Եկեղեցում ծիսարարողակարգը հունադավան հայերի եւ հույն քարոզիչների կողմից ներմուծված ծեսերից մաքրելու նպատակով: Ժողովում ընդունված 32 կանոններն ունեն նաեւ քաղաքական ենթատեքստ, քանի որ ուղղված էին հայոց մեջ

ներթափանցած հունական ծեսերի եւ արարողությունների դեմ:

Օձնեցու շինարարական-բարենորոգչական գործունեությանն է անդերադարձել ճարտարապետ Գ. Շախկյանը (1996, ԺԲ., էջ 165-167): «Հովհան Օձնեցի Իմաստասեր» խորագրով հոգևածու մարմն է գնահատվում հայրապետի ներդրումը Գուգարքի միջնադարյան ճարտարապետական դպրոցի կազմավորման գործում: Հոգևածու մանրամասն ներկայացված են Օձունի եկեղեցու վերակառուցման եւ հիմնանորոգման աշխատանքները, որոնք իրականացվել են Հովհան Օձնեցու օրոք:

Հովհան Օձնեցու երկերի ոսկեղենիկ լեզվի առանձնահատկություններին է անդերադարձել Վ. Համբարձումյանը «Հովհան Իմաստասեր Օձնեցի» հոգևածու (1997, Դ.-Ե., էջ 96-105): Հեղինակն Օձնեցու աստվածաբանական հայացքների նրբությունները պայմանավորում է նրա լեզվական անհատական ոճով: Այս նպատակից ելնելով՝ հոգևածագիրն ուսումնասիրում է Օձնեցու լեզվի ոճի գաղտնիքները, առանց որի «չատ բաներ կարող են անիմանալի մնալ, անհասու դառնալ»: Հեղինակն անդերադարձել է նաեւ Օձնեցու օգտագործած եւ մեզ այսօր հայտնի գրավոր աղբյուրների տարբերություններին, որոնք բացատրում է գրչագրական փոփոխումներով: Հոգևածու ներկայացված են նաեւ Օձնեցու լեզվի իմաստաբանական, ձևաբանական, շարահյուսական իրողությունները, պատկերավորման համակարգը:

Ջրավարարվելով հոգևածով՝ Վ. Համբարձումյանը 1999 թ. իր աշխատասիրությամբ հրատարակում է Հ. Օձնեցու «Երկերը» (Հ. Օձնեցի, երկեր, թրգմ., առաջաբանը եւ ծնթգր.՝ Վ. Համբարձումյանի, Երեւան, «Անահիտ» հրատարակչություն, 1999, 310 էջ): Այս գրքի վերաբերյալ գրախոսությամբ հանդես եկավ Լ. Խաչատրյանը (2000, Բ., էջ 131-136): Հեղինակը բարձր է գնահատում այս գրքի հրատարակումը, քանի որ «այս թարգմանության շնորհիվ Հովհան Օձնեցին դադարում է միայն գրաբարագետներին հասու լինելուց՝ դառնալով ընթերցող լայն հասարակայնության սեփականություն»: Լ. Խաչատրյանն արժեւորում է այս թարգմանության մեջ Վ. Համբարձումյանի կողմից բազում տերմինների ու գիտական անվանումների ճիշտ ընտրությունը եւ որպես օրինակ նշում է դրանցից մի քամիսը:

«Հովհան Օձնեցի հայրապետը եւ իր ժամանակը» խորագրով գիտաժողովի ամփոփ նկարագիրն է տրվել 2003 թ. Զ. համարի 125-126 էջերում:

Ուշագրավ է է. Կոստանդյանի «Հովհան Օձնեցի կաթողիկոսը Մաղաբիա արք. Օրմանյանի գնահատությամբ» հոգևածը: Հեղինակն անդ-

րադարձել է «Ազգապատում» գրքում Օձնեցուն նվիրված 45 էջերին, որտեղ Օրմանյանը կատարել է 129 հղում 20 հեղինակներից: Հոգվածագիրը նախ առանձնացրել է Օրմանյանի կարծիքը Օձնեցու մասին, ապա նշել Օրմանյանի կողմից Օձնեցու վերաբերյալ բոլոր տեղեկությունները՝ սկսած կաթողիկոսական թվականների քննությունից մինչև պավլիկյանների եւ երեւութականների մոլորությունները հերքող ճառերը: Հեղինակը կարեւորում է Օրմանյանի դիրքորոշումը՝ Հովհան Օձնեցուն անվանելու «հայոթյան ինքնությունն ու ազգություն ինքնությունը պահող հայրապետ» (2005, է.-Ը., 49-53):

Ամսագրի 2007 թ. Դ. (էջ 131) եւ 2008 թ. Դ. (էջ 129) համարներում համառոտ ներկայացված են ուխտագնացություններ Ս. Հովհան Օձնեցու շիրմին:

Իմաստասեր հայրապետի դավանաբանական պայքարին է անդրադարձել Վ. Վարդանյանը «Հովհան Օձնեցու պայքարը հայոց դավանանքի անաղարտության եւ պահպանման համար» հոդվածում (2007, Ե., 41-49): Հոգվածագիրն անդրադարձել է Հ. Օձնեցու կաթողիկոսության տարիներին Հայ Եկեղեցու հոգեւոր եւ պետաիրավական գործառույթների ընդլայնման պատճառներին, որի հիմքում տեսնում է Օձնեցու դիվանագիտական ճկուն գործունեությունը: Նա Օձնեցու նպատակը՝ «բարեկարգել Հայոց Եկեղեցու ծիսադավանական համակարգը, այն դարձնել ժամանակին համահունչ», լիովին իրականացված է համարում եւ մանրամասն քննում է Օձնեցու գաղափարական պայքարն ընդդեմ պավլիկյանների եւ երեւութականների: Անշուշտ, այդ դավանաբանական սկզբունքներն ունեին նաեւ քաղաքական սուր հնչեղություն եւ ուղղված էին Բյուզանդիայի կայսերականացված եկեղեցու դեմ, որը պաշտոնապես ընդունել էր քաղկեդոնականություն եւ հետեւողականորեն ջանում էր իրեն ենթարկել Հայոց Եկեղեցին:

Ս. Հովհան Օձնեցի հայրապետի կանոնական եւ իրավական ժառանգությունն է անդրադարձել Մակար աբեղա Հակոբյանը (2009, Ա., էջ 38-42): Հոգվածում ներկայացված է Հովհան Օձնեցու իրավագիտական գործունեությունը եւ «Կանոնագիրք Հայոց»-ի ստեղծման հանգամանքներն ու հիմնական դրույթները:

РЕЗЮМЕ

В номерах журнала «Эчмиадзин» в разные годы были опубликованы статьи, изучающие и касающиеся церковной деятельности Ована Одзнеци, его литературного наследия, особенностей творчества. Католикос Ован Одзнеци, будучи поборником сохранения самостоятельности Армянской Церкви, стал источником интересных статей и исследований на страницах журнала, где были также изданы переводы оригинальных текстов проповедей Ована Одзнеци на современный армянский язык.

SUMMARY

Issues of “Etchmiadzin” monthly printed in different years included articles that had examined and reflected on the church activity, literary heritage and peculiarities of works of Catholicos Hovhan Odznetsi.

Catholicos Hovhan Odznetsi, as an advocate of the preservation of the Armenian Church identity, was a source of inspiration for interesting articles and studies printed on the pages of the monthly. The articles of the monthly also featured translations of original texts of orations by Hovhan Odznetsi into modern Armenian language.

